ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության 12/07/2022թ. Որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է

«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության 05/09/2023թ. Որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է

«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության 30/10/2024թ. Որոշմամբ

Արտյոմ Զաքարյան

_____

(ստորագրություն)

Տիգրան Անտինյան

Tigran Antinyan

Digitally signed by Tigran Antinyan
Date: 2024.11.11 11:31:28 +04'00'

(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.11.29 15:38:29 AMT
Reason: Գրանցած է 27.11.2024թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրականացնում է ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեություն:
2. Ընկերության լրիվ անվանումն է՝
   1) հայերեն՝ «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն
   2) անգլերեն՝ “Limitless asset management” Closed Joint Stock Company
3. Ընկերության կրճատ անվանումն է՝
   1) հայերեն՝ «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ
   2) անգլերեն՝ “Limitless asset management ” CJSC
4. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արաբկիր համայնք, Քեռու 1/3 տ. 5-րդ հարկ:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

5. Ընկերության կանոնադրական կապիտալը 76 200 000 (յոթանասունվեց միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ է, որը բաժանված է 1270 (մեկ հազար երկու հարյուր յոթանասուն) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
6. Ընկերությունը կարող է օրենքով սահմանված կարգով փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ նաև՝ ժողով) կողմից:
7. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է բացառապես օրենքով սահմանված նպատակներով:
8. Ժողովի որոշմամբ Ընկերությունում կարող են ստեղծվել այլ հիմնադրամներ՝ սոցիալական, բարեգործական կամ այլ նպատակներով:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

9. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր, ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև օրենքով

նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են: Բաժնետոմսն անբաժանելի է:

10. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել միայն դրամական միջոցները, բացառությամբ Ընկերության բաժնետոմսերով շահաբաժինների վճարման դեպքի: Այլ արժեթղթերի դիմաց վճարման միջոց կարող են լինել դրամական միջոցները, գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:
11. Ընկերության արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:
12. Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ նաև՝ խորհուրդ) որոշմամբ, որով պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և այլ պայմանները:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Սույն գլուխը սահմանում է Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները: Ընկերության կողմից արտոնյալ բաժնետոմսեր թողարկվելու դեպքում դրա սեփականատերերի իրավունքները և պարտականությունները կսահմանվեն կանոնադրությամբ:
14. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:
15. Ընկերության բաժնետերն իրավունք ունի՝
    1) մասնակցելու ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
    2) մասնակցել Ընկերության կառավարմանը.
    3) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
    4) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
    5) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ Ընկերությանը դիմելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության գործունեությանը վերաբերող տեղեկությունները.

6) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
7) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
8) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
9) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
11) ունենալ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

16. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Իր բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը բաժնետերն իրականացնում է բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից հաշված 30 օրվա ընթացքում:
17. Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե որևէ բաժնետեր ցանկանում է վաճառել իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, ապա նա այդ մասին գրությամբ դիմում է Ընկերությանը՝ նշելով վաճառվող բաժնետոմսերի քանակը, գինը և վաճառքի այլ էական պայմանները: Գրությունը ստանալու պահից երկու օրվա ընթացքում Ընկերության գործադիր տնօրենը այդ գրությունը կամ դրա ամբողջական տեքստը ներառող ծանուցումը պատվիրված նամակով ուղարկում է կամ առձեռն հանձնում է Ընկերության մյուս բաժնետերերին: Պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնման ամսաթիվը համարվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օր:
18. Եթե բաժնետերերը համաձայնվում են ձեռք բերել առաջարկվող բաժնետոմսերը, ապա դրանք բաշխվում են՝
    1) բաժնետոմսերի գնման հայտերով որոշվող համամասնությամբ, եթե այդ հայտերում նշված բաժնետոմսերի գումարային քանակը չի գերազանցում առաջարկվող բաժնետոմսերի գումարային քանակին,
    2) բաժնետոմսերի գնման հայտեր ներկայացրած բաժնետերերի միջև՝ նրանց կողմից ձեռք բերված համաձայնության շրջանակներում որոշված համամասնությամբ, կամ
    3) բաժնետերերի միջև համամասնորեն, ըստ՝ կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության տեսակարար կշռի:
19. Եթե բաժնետերերը Ընկերության գործադիր տնօրենի կողմից ծանուցումն ուղղարկելու կամ առձեռն հանձնելու պահից սկսած 30 օրվա ընթացքում իրենց նախապատվության իրավունքից օգտվելու մտադրության մասին գրավոր ծանուցում չեն ուղարկում Ընկերությանը, ապա տնօրենի պահանջով կամ

սեփական նախաձեռնությամբ Ընկերության տնօրենների խորհուրդը հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի օրակարգում ընդգրկվում է Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ հրաժարվելու հարցը:

20. Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց: Բաժնետերը չի կարող բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց ավելի ցածր գնով և այլ նպաստավոր պայմաններով, քան առաջարկվել է մյուս բաժնետերերին և Ընկերությանը:
21. Եթե անձը Ընկերության կանոնադրական կապիտալում ձեռք է բերում այնպիսի մասնակցություն, որի համար պահանջվում է ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, սույն կանոնադրությամբ սահմանված նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի հաշվարկը սկսվում է ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու օրվան հաջորդող օրվանից:
22. Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 5 տոկոսին տիրապետող բաժնետերերը կարող են պահանջել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:
23. Ընկերության բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության վերաբերյալ գաղտնիք համարվող տեղեկությունները:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24. Ընկերությունը ստեղծվում է ներդրումային ֆոնդերի (այսուհետ նաև՝ ֆոնդ) կառավարման գործունեություն իրականացնելու համար: Ընկերությունը կարող է իրականացնել լրացուցիչ այլ գործունեություն, եթե դա թույլատրված է օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

25. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
26. Ընկերությունը պարտավոր է վճարել հայտարարված շահութաբաժինները:
27. Շահութաբաժինները կարող են վճարվել դրամով կամ այլ գույքով, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերով:
28. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

29. Միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:
30. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:
31. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

32. Ընկերության կառավարումն իրականացնում են
    1) բաժնետերերի ընդհանուր ժողովը,
    2) տնօրենների խորհուրդը,
    3) գործադիր տնօրենը:
33. Բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
34. Տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի իրավասությանը:
35. Գործադիր տնօրենն իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Գործադիր տնօրենի իրավասության ներքո են Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ ժողովի կամ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

36. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
37. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար: Արտահերթ ժողով կարող է գումարվել ցանկացած ժամանակ Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր տնօրենի, ներքին աուդիտի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի պահանջով, կամ պահանջը ներկայացնելու դրությամբ

Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

38. Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է տնօրենների խորհուրդը:

39. Ժողովի բացառիկ իրավասությանն է պատկանում՝
    1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
    2) Ընկերության վերակազմակերպումը.
    3) Ընկերության լուծարումը.
    4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
    5) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
    6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
    7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
    8) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
    9) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը.
    10) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
    11) օրենքին համապատասխան՝ Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի նկատմամբ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
    12) Ժողովի վարման կարգի հաստատումը.
    13) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
    14) օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.
    15) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.
    16) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

17) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
18) Ընկերության խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության կամ պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման պայմանների որոշումը.
19) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

40. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
41. Սույն կանոնադրության 39-րդ կետի 2-րդ, 11-րդ, 13-17-րդ ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:
42. Սույն կանոնադրության 39-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ և 15-րդ ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:
43. Սույն կանոնադրության 39-րդ կետի 3-րդ, 7-րդ և 13-րդ ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
44. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում ներկայացվում են բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:
45. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:
46. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելիին տիրապետող բաժնետերերը:
47. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած

քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) տրամադրվում են բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

48. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
    1) Ընկերության բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,
    2) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները, տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
    3) Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները,
    4) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում),
    5) անհրաժեշտության դեպքում՝ այլ հրավիրված անձինք:
49. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 50-ից ավելի տոկոսին: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
50. Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 30-ից ավելի տոկոսին:
51. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ ռեեստրը վարող անձի տված տվյալների (ցուցակի) հիման վրա:
52. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:
53. Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

54. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:
55. Ժողովի մասին ծանուցումը, ինչպես նաև քվեաթերթիկների տրամադրումը իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ անձամբ հանձնելով՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ, եթե օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

56. Տնօրենների խորհուրդը բաղկացած է երեք անդամից:
57. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:
58. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող խորհրդի անդամը նախագահում է ժողովներում, բացառությամբ ժողովի վարման կարգով նախատեսված դեպքերի:
59. Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
60. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին: Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:
61. Ընկերության խորհրդում, բացի սույն կանոնադրության 56-60-րդ կետերով նախատեսված անդամներից, ընդգրկվում է նաև Ընկերության կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի ընտրած մեկական ներկայացուցիչ (բացառությամբ այն ֆոնդերի, որոնց կանոններով (կանոնադրությամբ) սահմանված է, որ այդպիսի ներկայացուցիչ չի ընտրվում, ինչպես նաև այն պայմանագրային ֆոնդերի, որոնցում ֆոնդի ժողով չի գումարվում), որոնք խորհրդի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով, բացառությամբ, եթե դրանցում լուծվում են այն ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցեր, որի ներկայացուցիչն է խորհրդի տվյալ անդամը: Այդպիսի նիստերին վերջինս մասնակցում է խորհրդի մյուս լիարժեք

անդամներին հավասար ձայնի իրավունքով: Ընկերության խորհուրդը կարող է որոշում ընդունել խորհրդի նիստին (դրա որոշակի մասին) սույն կետով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությունը սահմանափակելու վերաբերյալ, եթե դրանում բացահայտվելու են Ընկերության համար առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ: Ընդ որում, Ընկերության խորհրդում համապատասխան ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների բացակայությամբ չի կարող որոշում ընդունվել տվյալ ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցերի վերաբերյալ, եթե այդպիսի բացակայությունը պայմանավորված է սույն կետով նախատեսված մասնակցության սահմանափակումը կիրառելու մասին խորհրդի որոշմամբ: Սույն կետով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների վարձատրությունն իրականացվում է համապատասխան ֆոնդի միջոցների հաշվին՝ ֆոնդի ժողովի սահմանած պայմաններով:

62. Խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում՝
    1) ֆոնդի ստեղծման և կառավարման մասին որոշման կայացումը.
    2) Ընկերության ստեղծած կամ նրա կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի կանոնների և դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների հաստատումը.
    3) Ընկերության՝ որպես ֆոնդի նոր կառավարիչ հանդես գալու դեպքում այդ ֆոնդի կանոնների ընդունումը.
    4) Ընկերության ստեղծած կամ նրա կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի պահառության պայմանագրի՝ պահառուի հետ փոխհամաձայնեցված փոփոխության մասին որոշման կայացումը.
    5) Ընկերության կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի միացման և դադարեցման մասին որոշումների կայացումը.
    6) «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ֆոնդի կառավարման պայմանագրից միակողմանի հրաժարման մասին որոշման կայացումը.
    7) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը.
    8) ժողովների օրակարգի հաստատումը.
    9) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթների համապատասխան.
    10) սույն կանոնադրության 39-րդ կետի 2-րդ, 11-րդ, 13-17-րդ ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
    11) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով.

12) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
13) Ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, վարձատրության չափի որոշումը, գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նրա լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.
14) Ընկերության ներքին աուդիտի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
15) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
16) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
17) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
18) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
19) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
20) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը.
21) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
22) գործարար ծրագրերի, ամենամյա ծախսերի նախահաշվի (տարեկան բյուջեի) և դրա կատարողականի հաստատումը.
23) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
24) Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերի ակտիվների ռազմավարական տեղաբաշխման որոշումների հաստատումը:
25) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
26) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
27) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
28) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.
29) օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

63. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության ներքին աուդիտորի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր տնօրենի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
64. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս քան վեց ամիսը մեկ անգամ:
65. Խորհրդի նիստերում նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի կատարում է խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի անդամների համաձայնությամբ:
66. Խորհրդի նիստի օրակարգը հաստատում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն 3 աշխատանքային օր առաջ պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն եղանակով նիստի վերաբերյալ ծանուցում է խորհրդի անդամներին՝ ներկայացնելով նիստի օրակարգը և նյութերը:
67. Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են խորհրդի բոլոր անդամների 2/3-ը:
68. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
69. Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:
70. Խորհուրդը կարող է որոշում ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի անդամները հաղորդակցվում են միմյանց հետ հեռախոսակապի, հեռուստակապի կամ նման այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման միջոցով) կարգով անցկացվող նիստ չի համարվում:
71. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 5 օրվա ընթացքում:
72. Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է երեքից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

73. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը:

74. Գործադիր տնօրենը կարող է Ընկերության կազմում իրականացնել ֆոնդի կառավարման գործունեություն:
75. Խորհրդի կողմից գործադիր տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որն Ընկերության անունից ստորագրում է խորհրդի նախագահը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ խորհրդի անդամներից մեկը:
76. Ընկերության տնօրենը՝
    1) Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
    2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
    3) գործում է առանց լիազորագրի.
    4) տալիս է լիազորագրեր.
    5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
    6) բանկերում, պահառու կազմակերպություններում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
    7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ներքին կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
    8) մշակում է Ընկերության քաղաքականությունները, ռազմավարությունը, նպատակները, գործարար ծրագրերը, ֆոնդերի կանոնները և ներկայացնում խորհրդի հաստատմանը.
    9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
    10) կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների և հանձնարարականների կատարումը.
    11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
    12) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
    13) իրականացնում է Ընկերության ներքին ակտերով և օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

77. Ընկերությունում ստեղծվում է անկախ ներքին աուդիտի ստորաբաժանում (ներքին աուդիտ): Ներքին աուդիտի ստորաբաժանումը կարող է բաղկացած լինել նաև մեկ անձից (ներքին աուդիտոր): Խորհրդի որոշմամբ ներքին աուդիտի գործառույթները կարող են պատվիրակվել անկախ աուդիտորին:

78. Ներքին աուդիտորները նշանակվում են խորհրդի կողմից:
79. Ներքին աուդիտի գործունեության կանոնները սահմանվում են խորհրդի կողմից:

XII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

80. Ընկերության ստեղծման պահին Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը սեփականության իրավունքով ամբողջությամբ պատկանում են երկու անձի:
81. Սույն կանոնադրության մեջ կատարված լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից: